

շահիլ, նոյնիման պայքարն է:

Պէտք է հաւատանք, որ ՄԵԾ ՀՈՒՆԶՔԸ կու գայ իր ժամանակին, առանց անպէտ, յախուռն եւ անօգուտ ֆայլեր առնելու ժամանակէն առաջ:

Հին իմաստութիւնը կ'ըսէ, անիմաստ է անապարելը, պէտք է պատրաստուիլ ժամանակին հասնելու:

Հին Յունաստանի քաղաքներէն մէկուն մուտքին կար հսկայ արձան մը, որ կը ներկայացնէր պատեհութիւնը: Արձանին պատուանդանին վրայ՝ այլաբանօրէն փորագրուած էր հետեւեալ խօսակցութիւնը արձանին ու անցորդին միջեւ:

- Ով արձան, ի՞նչ է անունդ:

- ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ:

- Ինչո՞ւ համար թեւեր ունիս եւ կը կանգնիս ոտքիդ մատներուն վրայ:

- Ցոյց տալու համար, որ հագիւ քանի մը բոսքէ կը մնամ ու կ'անցնիմ:

- Ինչո՞ւ համար մագերէր ցակտիդ վրայ դէպի վար կ'ախուած եմ:

- Որպէս զի մարդիկ զիս լաւ բռնեն, երբ իրենց բովէն կ'անցնիմ:

- Ինչո՞ւ գլխուդ ետեւը ցաղատ է:

- Երբ անգամ մը մէկու մը բովէն կ'անցնիմ, ալ զիս չկարենայ բռնել:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԷՆՅ. ՏԻԻԼԿԷՐԵԱՆ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀՈՒԱԾ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը գոհունակութեամբ տեղեկացաւ թէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Ս. Օծուքին Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին բարեհաճ կարգադրութեամբ, Արքութեան աստիճան շնորհուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն երեք Սրբազան Եպիսկոպոսներու, որոնք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հաստատումով կը ծառայեն որպէս թեմակալ Առաջնորդներ: Գեր. Տ. Խաթակ Արք. Պարսամբան Առաջնորդն է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմին: Գեր. Տ.

Ադան Արք. Պալիօզեան Առաջնորդն է Աւստրալիոյ եւ Նիւ Զիլանտայի Հայց. Եկեղեցւոյ, եւ Հայրապետական Պատուիրակ Ծայրագոյն Արեւելի: Գեր. Տ. Տաթեւ Արք. Ղարիպեան Առաջնորդն է Հարաւային Ամերիկայի Պրագիլիոյ Հայց. Եկեղեցւոյ Թեմին:

Պատրիարք Սրբազան Հայրը իր եւ Միաբանութեան խնդակցութիւնը յայտնեց երեք Սրբազան Արքեպիսկոպոս միաբան եղբայրներուն, մաղթելով որ իրենց ծառայութիւնը արդիւնաշատ լինի Տիրոջ օգնականութեամբ, Աստուծոյ Փառքին, եւ իրենց խնամքին յանձնուած ժողովուրդին հոգեւոր, մշակութային, կրթական եւ ազգային կեանքի բարգաւաճման համար: